GUSD-ի համակարգչային սարքի վարձակալության պայմանագրի ակնկալիքները

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի (GUSD) համակարգչային սարքերի վարձկալության պայմանագիրը նախատեսված է ամբողջ կրթաշրջանի տարածքում կրթական նպատակներով տեխնոլոգիայի օգտագործումը բարձրացնելու համար: Աշակերտներին տրվում է քրոմբուք, որը Chrome վեր բրաուզեր է, որ ստեղծվել է Google ընկերության կողմից: Այս սարքն համատեղ աշխատում է դպրոցի կողմից թողարկված Google-ի հաշիվների հետ՝ օգտվելով Google Drive-ից, Google Apps-ից, և երրորդ կողմի ուսումնական կայքերի ու ծրագրերի լայն տեսականից:

Ամբողջ ժամանակ, երբ աշակերտը մասնակցում է GUSD-ի համակարկգչային սարքերի վարձկալության ծրագրին, ծնողները/խնամակալները պատասխանատվություն են կրում իրենց աշակերտի քրոմբուքի և տանն օգտագործվող ինտերնետի վերահսկողության ու խնամքի համար: Եթե չարաշահման կամ խնամքի պակասի հետևանքով քրոմբուքը ֆիզիկական որևէ վնաս կրի, ընտանիքները ֆինանսական պատասխանատվություն են կրելու քրոմբուքի վերանորոգման կամ փոխարինման ծախսերի համար, ճիշտ այնպես, ինչպես կվարվեն կորած կամ վնասված դասագրքերի համար:

Ստորև ներկայացված է ձեր քրոմբուքի խնամքի ուղեցույցը՝

1. **Ոչինչ չպետք է տեղադրել** (կցել, սոսնձել, ձայնագրել, ամրացնել) քրոմբուքի պլաստիկե պատյանին կամ էկրանին: Բոլոր պիտակները, որոնք փակցված են քրոմբուքերի վրա, ներառյալ barcode-երը, պետք է մնան քրոմբուքերի վրա ընթեռնելի և չխմբագրված վիճակում:

2. **Բոլոր հեղուկներն ու ուտելիքները հեռու պահեք ձեր քրոմբուքերից:** Հեղուկները և ուտելիքների փշրանքները կարող են վնասել նուրբ էլեկտրոնային սխեմաները:

3. **Քրոմբուքն օգտագործելուց առաջ միշտ մաքուր պահեք ձեռքերը:** Մաքուր ձեռքերն ավելի դյուրին են դարձնում քրոմբուքերի ստեղնաշարն օգտագործելու և ավելի քիչ կեղտ ու բծեր թողնելու համակարգչի վրա:

4. **Պաշտպանեք LCD-ի էկրանի մոնիտորը:** Կափարիչը նրբորեն փակեք: Վստահացեք, որ ոչ մի առարկա (օրինակ՝ մատիտ, թուղթ և այլն) չի մնացել ստեղնաշարի վրա, որը կափարիչը փակելուց կարող է բերծել կամ վնասել էկրանը:

5. **Վստահացեք, որ քրոմբուքը պահեք իր պաշտպանիչ պատյանում (եթե այն տրամադրված է):** Ի վերջո, դուք պատասխանատու եք ամեն ինչի համար, որ կարող է պատահել ձեր քրոմբուքում:

6. **Պաշտպանեք ձեր ինքնությունը:** Ուշադիր եղեք, տալով ձեր էլփոստի հասցեն և անձնական տեղեկությունները ինտերնետում:

Օգտվելու կանոններ

Բաշխում և կառավարում

Քրոմբուքները Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի սեփականությունն են և աշակերտներին կտրամադրվեն մինչև դպրոցների վերաբացվելը: Քրոմբուքները պետք է օգտագործվեն միայն Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի աշակերտների և նրանց ընտանիքների կողմից և միմիայն դպրոցական նպատակառումներով: Քրոմբուքները չեն կարող ուրիշ անձինք օգտագործել:

Եթե դպրոցը վերաբացվելուց հետո քրոմբուքը ժամանակին չվերադարձվի, ապա այն կհայտարարվի որպես գողացված ապրանք: Այնուհետև իրավապահ մարմինները կներգրավվեն քրոմբուքն առգրավելու և բոլոր օրինախախտների դեմ մեղադրանք առաջադրելու համար:

Աշակերտի կամ ծնողի անփութության հետևանքով կորցրած կամ գողացված քրոմբուքները նորով չեն փոխարինվի, և աշակերտները գուցե ստիպված լինեն իրենց աշխատանքն ավարտին հասցնել առանց քրոմբուքի օգտագործման:

Եթե քրոմբուքի լիցքավորիչը կորել է, ապա աշակերտն է պատասխանատու դրա փոխարինման համար:

Կորած կամ գողացված քրոմբուքների մասին պետք է անհապաղ զեկուցել: Քրոմբուքի գողության մասին զեկուցումից հետո աշակերտը պետք է դպրոցի ղեկավարությանը նկարագրի հանգամանքը: Եթե քրոմբուքը գտնվի և վերադարձվի դպրոցին, ապա այն կվերտրվի աշակերտին:

Պատասխանատու օգտագործման/համացանցի օգտագործման անվտանգության քաղաքականություն
Քրոմբուքները տրամադրվում են, որպեսզի աշակերտները հնարավորություն ունենան օգտվել կրթական ռեսուրսներից և շարունակել ուսուցումը մինչև դպրոցների վերաբացվելը:

Աշակերտներին արգելվում է մուտք գործել, հրապարակել կամ ստեղծել ոչ պատշաճ բովանդակությամբ նյութեր, ներառյալ բռնություն, մերկություն, անբարոյականություն, անպարկեշտ կամ այլ կերպ ոչ նպատակահարմար նյութեր ներկայացնող պատկերներ կամ լեզու: Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը վերահսկում է ինտերնետի գործունեությունը, անկախ նրանից, թե որտեղ է այն հասանելի, որպեսզի սահմանափակի ոչ պատշաճ բովանդակությամբ առցանց նյութերը: Այնուամենայնիվ, ոչ մի վերահսկող համակարգ 100% արդյունավետ չէ, և վերջնական պատասխանատվությունը ընկնում է աշակերտի և նրա ընտանիքի վրա:

Գաղտնիության քաղաքականություն
Քրոմբուքները Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի սեփականությունն են: Կրթաշրջանի քրոմբուքով հասանելի տեղեկությունները կարող են կրթաշրջանի կողմից ղեկավարվել, դիտվել կամ դասակարգվել:

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանն իրավունք է վերապահում հետաքննել աշակերտների և նրանց ընտանիքների կողմից համակարգչային կասկածելի ոչ պատշաճ օգտագործումը և լիովին կհամագործակցի տեղական, նահանգային և դաշնային իրավապահ մարմինների հետ՝ ապօրինի սխալ օգտագործման կամ սխալ օգտագործման կասկածի դեպքում:

Կարգապահական գործողություններ
Սույն փաստաթղթում ներկայացված կանոններին և ուղեցույցներին չհետևելը կհանգեցնի կարգապահական գործողությունների և, անհրաժեշտության դեպքում, քրեական հետապնդման: Սա ներառում է, բայց չի սահմանափակվում միայն քրոմբուքի վարչական կարգավորումներին չհետևելը, դպրոցի կողմից տրամադրված քրոմբուքի նկատմամբ անփույթ վերաբերմունքը կամ հափշտակումը և այլն: Կախված խախտումից՝ կարգապահական գործողությունները պետք է որոշվեն Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի վարչակազմի կողմից և կարող են ներառել ծնողների հետ կապ հաստատելը, առաջադրանքի համար կրեդիտի կորցնելը, դասերից հետո աշակերտին դպրոցում պահելը, դասասենյակից կամ դպրոցից ժամանակավորապես հեռացնելը և ժամանակավորապես կամ ընդմիշտ քրոմբուքից օգտվելու արտոնությունը կորցնելը:

The GUSD-ի աշակերտի/ծնողի կողմից համակարգչային սարքի վարձակալության պայմանագիր

Ես հաստատում եմ, որ կարդացել և հասկացել եմ GUSD-ի համակարգչային սարքավորման վարձակալման ծրագրի ակնկալիքների կանոններն ու ուղեցույցները: Ես հասկանում եմ, որ GUSD-ի քրոմբուքները ուսման համար նախատեսված գործիք է, որը տրամադրվել է կրթաշրջանի կողմից:

Ես համաձայն եմ, որ երեխաս և ես կհետևենք GUSD-ի համակարգչային սարքի վարձակալության ծրագրի սպասելիքներին և հասկանում եմ կանոններն ու ուղեցույցները խախտելու հետևանքները: Ես հասկանում եմ, որ քրոմբուքներից օգտվելու երեխայիս իրավունքը հնարավոր է չեղյալ համարեն, եթե նա չհետևի կանոններին և ուղեցույցներին: Ես հասկանում եմ, որ կարող են լինել կարգապահական և իրավական գործողություններ, եթե քրոմբուքը պատշաճ կերպով չօգտագործվի:

Ես հասկանում եմ, ոչ չեմ կարող ներկայացնել որևէ բողոք, պատասխանատվության կանչել կամ հայց ներկայացնել որևէ մեկի դեմ կամ որևէ այլ կերպ փոխհատուցում կամ վնասների բավարարում պահանջել GUSD-ից՝ համացանցային անվտանգության կամ ապահովության միջացառումների խախտման, քրոմբուքի և սպասարկող ծրագրի անսարքության համար կամ որևէ վնասի, վնասվածքի կամ ծախսի համար, որը կառաջանա քրոմբուքի հետ անփույթ և ոչ պատշաճ օգտագործման հետևանքով:

Ես համաձայն եմ վերանայել GUSD-ի համակարգչային սարքի վարձակալության ծրագրի սպասելիքները և քննարկել դրա բովանդակությունը երեխայիս հետ: Ես հասկանում եմ կանոնները և ուղեցույցները, որոնք վերաբերում են երեխայիս կողմից Chromebook-ի սխալ օգտագործման և այն վնասելու հետևանքներին: Ես համաձայն եմ վերահսկել, թե ինչպես է երեխաս օգտագործում քրոմբուք և թե ինչպես է նա օգտվում համացանցից տանը:

Student ID (6-digits): _____

_____	_____
Ծնողի անունը	**Աշակերտի** անունը
_____	_____
Ծնողի/խնամակալի ստորագրությունը	Ամսաթիվ
_____	_____
Ծնողի/խնամակալի էլ. հասցեն	**Ծնողի/խնամակալի** հեռախոսը

Chromebook-ի տեղեկությունները (նախատեսված է միայն պաշտոնական օգտագործման համար):

GUSD Tag #: _____